ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

№ - 020/0817
11 մարտ 2025թ.

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մ.Բաղրամյան 26, Հեռ.(0252)2-43-93
Կայք՝ www.aparan.am էլ.փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com

«Պրոյեկտ ինտեր-ինվեստ» ՍՊԸ -ին
էլ. հասցե՝ proyektinterinvest@mail.ru
ՀՎՀՀ՝04715615

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանիորեն լուծարելու մասին

Հարգելի գործընկեր.

Հայտնում եմ Ձեզ այն մասին, Ապարանի համայնքապետարանի կարիքների համար Ապարան համայնքի Արագած բնակավայրի մանկապարտեզի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով Ապարանի համայնքապետարանի և «Պրոյեկտ ինտեր-ինվեստ» ՍՊԸ -ի միջև 2023թվականի հունիսի 7-ին կնքվել է N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-36/23 պայմանագիրը 343 714 800 /երեք հարյուր քառասուներեք միլիոն յոթ հարյուր տասնչորս հազար ութը հարյուր/ ՀՀ դրամ արժեքով՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պայմանով:

Պայմանագրով նախատեսված աշխատանքները իրականացվում են սուբվենցիոն ծրագրի շրջանակներում՝ համայնքի մասնաբաժին 30/երեսուն/ տոկոս, սուբվենցիոն մասնաբաժին 70/յոթանասուն/ տոկոս ներդրմամբ: Կապալառու կազմակերպության կողմից 28.08.2024թվականին համայնքային մասնաբաժնով նախատեսված աշխատանքները/30 տոկոս/ իրականացվել են, ներկայացվել է կատարողական ակտ և կատարվել են վճարումները: Համայնքային մասնաբաժնով նախատեսված վճարումները և կատարողակն ակտերը ՀՀ կառավարության լիազոր մարմին ներկայացնելուց հետո, սուբվենցիոն մասնաբաժնով ֆինանսական միջոցները հատկացվել են և 30.09.2024թվականին համաձայն N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-36/23 պայմանագրի 8.15 կետի Կապալառու կազմակերպությանը գնումների համակարգողի haykhovsepyanhv@mail.ru էլ. հասցեից Կապալառու կազմակերպության proyektinterinvest@mail.ru էլ. հասցեին ծանուցվել 70/յոթանասուն/ տոկոս ֆինանսական միջոցների առկայության և աշխատանքները շարունակելու վերաբերյալ Համաձայնագիր N5-ը:

Միաժամանակ վերո նշված ծանուցմամբ պահանջվել է ներկայացնել նաև բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով պայմանագրի և որակավորման ապահովումները, ինչպես նաև 247 022 986/ երկու հարյուր քառասունյոթ միլիոն քսաներկու հազար ինը հարյուր ութանասունվեց/ ՀՀ դրամ նկատմամբ 10/տաս/ տոկոս պայմանագրի և 30/երեսուն/ տոկոս որակավորման ապահովումները բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, ինչպես նաև <<Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ու որակավորման կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 30 նոյեմբերի 2023 թվականի N 2106-Ն որոշմամբ շինարարության իրականացման համապատասխան լիցենզիան և ներդիրները:

Համաձայն 2022թվականի դեկտեմբերի 16 <<Լիցենզավորման մասին>> օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-431-Ն օրենքի 7-րդ հոդվածի Կապալառու կազմակերպության լիցենզիան և ներդիրները 17.09.2024թվականից օրենքի ուժով համարվել են դադարեցված: Մինչև 17.09.2024թվականը Կապալառու կազմակերպությունը պետք է urban.e-gov.am հարթակի միջոցով դիմեր վերալիցենզավորման համար,որը չի իրականացրել: Գնումների համակարգողի կողմից մինչև վերո նշված Համաձայնագիր N5-ը ծանուցելը 19.09.2024թվականին Ապարանի համայնքապետարանի պաշտոնական էլ. փոստից ծանուցվել է «Պրոյեկտ ինտեր-ինվեստ» ՍՊԸ-ին և մի շարք այլ կազմակերպությունների,որ մինչև 30.09.2024թվականը Ապարանի համայնքապետարանի քաղաքաշինության բաժին ներկայացնեն 2022թվականի դեկտեմբերի 16 <<Լիցենզավորման մասին>> օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-431-Ն օրենքով և <<Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ու որակավորման կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 30 նոյեմբերի 2023 թվականի N 2106-Ն որոշմամբ սահմանված լիցենզիան և ներդիրները:

Ըստ 30.09.2024թվականի ծանուցված գրության Համաձայնագիր N5-ը կից փաստաթղթերը ներկայացնելու վերջնաժամկետը սահմանված էր 21.10.2024թվականը:

21.10.2024թվականին «Պրոյեկտ ինտեր-ինվեստ» ՍՊԸ-ն գրությամբ հայտնել է, որ չի դիմել վերալիցենզավորման համար, տվյալ պահին չի կարող ներկայացնել լիցենզիան և ներդիրները, այդ իսկ պատճառով մտավախություն ունի,

որ որեսց կողսրց Հասաձայսագրր ՈՁ-ը և որակավորսաս ապառողուսսերը սերկայացսելու դեպքուս Պատվիրատուս կարող է չկնքել Համաձայնագիրը և պայմանագիրը միակողմանիորեն լուծարելու գործընթաց սկսի լիցենզիան և ներդիրները չներկայացնելու հիմքով:Միաժամանակ «Պրոյեկտ ինտեր-ինվեստ» ՍՊԸ-ն խնդրել է պարզաբանել,արդյո՞ք լիցենզիա չունենալը պայմանագիրը միակողմանիորեն լուծարելու հիմք է, արդյո՞ք կարող է շարունակել աշխատանքները հին լիցենիայով և արդյո՞ք չկա հակասություն ՀՀ Սահմանդրության 73-րդ հոդվածի 1-ի մասի և 2022թվականի դեկտեմբերի 16 <<Լիցենզավորման մասին>> օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-431-Ն օրենքի միջև:

Ապարանի համայնքապետարանը ի պատասխան «Պրոյեկտ ինտեր-ինվեստ» ՍՊԸ-ի հարցման 12.11.2024թվականին պաշտոնական պարզաբանում է խնդրել գործունեության ոլորտը կարգավորող լիազոր մարմնից՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեից:

03.12.2024թվականին ստացվել է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի պատասխան գրությունը:

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն պարզբանմաբ հայտնել է, որ քաղաքաշինական ծրագրի ընթացքը անխափան կարող է իրականացվել միայն վերալիցենզավորման պայմաններում և եթե կազմակերպությունը վերալիցենզավորված է և ունի տվյալ պահին գործունեություն իրականացնելու համար պահանջվող ներդիրը, ապա պահանջվող մյուս ներդիրների բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ պայմանագիրը միակողմանիորեն լուծարելուն և միաժամանակ նշել, որ «Պրոյեկտ ինտեր-ինվեստ» ՍՊԸ-ն տվյալ պահի դրությամբ վերալիցենզավորման հայտ չի ներկայացրել:

Հաշվի առնելով, որ մանկապարտեզի կառուցման ծրագիրը իրականացվում է սուբվենցիոն ծրագրի շրջանակներում, փորձելով ապահովել ծրագրի անխափան ընթացքը պատասխանատու ստորաբաժանումը դիմել է Կապալառու կազմակերպությանը քայլեր ձեռնարկել վերալիցենզավորվելու համար: Կապալառու կազմակերպությունը մի քանի անգամ հավաստիացրել է, թե վերալիցենավորվելու է և ներկայացնելու է լիցենզիան, Համաձայնագիր N5-ը և կից փաստաթղթերը, սակայն մինչ օրս չի ներկայացրել:

Պատասխանատու ստորաբաժանումը 07.03.2025թվականի զեկուցագրով առաջարկել է Պատվիրատուի ղեկավարին համաձայն N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-36/23 պայմանագրի 8.15 կետի չկատարված 240 600 360 / երկու հարյուր քառասուն միլիոն վեց հարյուր հազար երեք հարյուր վաթսուն/ ՀՀ դրամի մասով միակողմանիորեն լուծարել Ապարանի համայնքապետարանի և «Պրոյեկտ ինտեր-ինվեստ» ՍՊԸ-ի միջև 2023թվականի հունիսի 7-ին կնքված N ՀՀ-ԱՄ-ԱՀ - ՀԲՄԱՇՁԲ-36/23 պայմանագիրը, միաժամանակ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 26-րդ ենթակետի վերջին պարբերության և նույն կետի 27-րդ ենթակետի «Պրոյեկտ ինտեր-ինվեստ» ՍՊԸ-ից գանձել Հայէկոնոմբանկ ԲԲԸ-ի կողմից 12.07.2023թվականին թիվ 32.2-08/264 բանկային երաշխիքով տրված 10586700/ տաս միլիոն հինգ հարյուր ութանասունվեց հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ գումարը:

Ելնելով վերոգրյալից Պատվիրատուի ղեկավարը 11.03.2025թվականի N173 որոշմամբ չկատարված 240 600 360 / երկու հարյուր քառասուն միլիոն վեց հարյուր հազար երեք հարյուր վաթսուն/ ՀՀ դրամի մասով միակողմանիորեն լուծարել Ապարանի համայնքապետարանի և «Պրոյեկտ ինտեր-ինվեստ» ՍՊԸ-ի միջև 2023թվականի հունիսի 7-ին կնքված N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-36/23 պայմանագիրը:

Միաժամանակ սույն ծանուցմամբ առաջարկում է «Պրոյեկտ ինտեր-ինվեստ» ՍՊԸ-ին համաձայն ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-36/23 ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.14 կետի Պատվիրատուի կողմից www.procurement.am պաշտոնական տեղեկագրում պայմանագիրը միակողմանիորեն լուծարելու ծանուցումը հրապարկվելու օրվանից հաշված տասներորդ օրը համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 26-րդ ենթակետի վերջին պարբերության և նույն կետի 27-րդ ենթակետի պահանջների վճարել պայմանագրի չկատարված մասի միակողմանի տուժանքի ձևով ներկայացված ապահովումները՝ (որակավորման ապահովում՝ 74 110 000/յոթանասունչորս միլիոն մեկ հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ, պայմանագրի ապահովում՝ 24 705 000/ քսանչորս միլիոն յոթ հարյուր հինգ հազար/ ՀՀ դրամը) Ապարանի համայնքապետարանի 900452000079 հաշվեհամարին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում չներառվելու համար:

Կից ներկայացվում է 11.03.2025թվականի N173 որոշումը և ընթացակարգի անհրաժեշտ փաստաթղթերը:

Առդիր մեկ զիպ ֆայլ

Հարգանքներով՝

Համայնքի ղեկավարի Ժ/ա՝ **Ա.Գ. Կարապետյան**

Կատարող՝ Ապարանի համայնքապետարանի
գնումների գլխավոր մասնագետ Հ.Հովսեփյան
բջջ. +37494231893